Կարգապահական գործ թիվ ԿԳ-25067

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԻՆԵ ԿԱՌԼԵՆԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արմինե Դավթյանի,

քննության առնելով փաստաբան **Արմինե Կառլենի Դավթյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (Հավատարմագիր՝ 96, արտոնագիր՝ ԱՀ-103) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը **(այսուհետև՝ Դիմող կամ Տեսչական մարմին),** ի դեմս Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Աննա Մկրտումյանի, դիմելով Պալատ, դժգոհություն է հայտնել փաստաբան Արմինե Դավթյանի վարքագծից:

Դիմողը տեղեկացրել է, որ Փաստաբանը 28.02.2025 թվականին Տեսչական մարմին ներկայացրել է «Դիմում-Պահանջ» վերտառությամբ փաստաթուղթը, որով պահանջել է *«...ստանալ պարզաբանում, կատարել վերջնահաշվարկ, տրամադրելով 4 տարվա արձակուրդային գումարը և պարզաբանել, թե ինչ հիմունքներով է Կարեն Առաքելյանը 4 տարի աշխատանք կատարել, որպես աշխատավարձ գումար է փոխանցվել և այլն: Անհրաժեշտ է հարուցել վարչական վարույթ, վարույթին մասնակից դարձնելով Կարեն Առաքելյանին և փաստաբան Արմինե Դավթյանին: Վերոթվարկյալ պահանջը կատարել ամենասեղմ ժամկետում»:*

Դիմողը, վկայակոչելով ՀՀ վարչապետի 11.06.2018 թվականի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 755-Լ որոշման, «Փաստաբանության

մասին» օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կարգավորումները եզրահանգել է, որ նման պահանջի ներկայացումը կարող է նսեմացնել և կասկածի տակ դնել փաստաբանի դերը հասարակությունում և նրա մասնագիտական գիտելիքները, քանի որ փաստաբանական գործունեություն իրականացնելիս փաստաբան Արմինե Դավթյանը պարտավոր էր ուսումնասիրել ոլորտին առնչվող իրավական ակտերը, այդ թվում նաև՝ Տեսչական մարմնի կանոնադրությունը, և ներկայացներ Տեսչական մարմնի լիազորություններին վերաբերելի պահանջ, քանի որ Տեսչական մարմինը դիմումատուին վերջնահաշվարկ տրամադրող և հաշվարկող մարմին չէ:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը ներկայացրել է փաստաբան Արմինե Դավթյանի դիմումը՝ խնդրելով այն դարձնել ուսումնասիրության առարկա:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով Դիմողին ներկայացվել է 13.06.2025 թվականին կազմված պահանջ **(այսուհետև՝ Պահանջ) «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը պահանջը ստացել է էլեկտրոնային փոստով 13.06.2025 թվականին, ինչը հավաստվում է էլեկտրոնային փոստով ուղարկված Դիմողի պատասխան նամակով: Դիմողը սահմանված ժամկետում ներկայացրել է գրություն առ այն, որ Տեսչական մարմնում բացի Փաստաբանի կողմից ներկայացված «Դիմում-պահանջ» վերտառությամբ փաստաթղթերից, որը ներկայացվել է Տեսչական մարմնի 2025 թվականի մարտի 21-ի գրությանը կից, այլ ապացույցներ կամ դիրքորոշում առկա չէ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արմինե Դավթյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Աննա Մկրտումյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 25.04.2025 թվականի բացատրությամբ նկարագրելով իր վստահորդ Կարեն Առաքելյանին վերաբերող գործի մանրամասները՝ հայտնել է, որ գործել է իր վստահորդի շահերի պաշտպանության ապահովման ուղղությամբ:

Փաստաբանի պնդմամբ, Դիմողի բողոքը չի հիմնավորում իր կողմից որևէ խախտում թույլ տալու հանգամանքը, իսկ վերջինիս կողմից վկայակոչված նորմերով արգելված չէ պահանջ ներկայացնել որևէ սուբյեկտի:

Փաստաբանի պնդմամբ, Տեսչական մարմինը «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ի այն վերադասն է, ում կարող էր բողոք ներկայացվել, այդ պատճառով նշվել է, թե ինչ է պահանջվում «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ից:

Ըստ Փաստաբանի՝ իրենց պահանջն ուղղված է եղել ոչ թե Տեսչական մարմնին, այլ «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ին, քանի որ պահանջի կատարողը «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ն էր, ոչ թե Տեսչական մարմինը, հաշվի առնելով այն, որ վերջինս վերջնահաշվարկ տրամադրող և հաշվարկող մարմին չէ:

Փաստաբանը հավելել է, որ իր դիմումի քննարկումը դրական արդյունք է ստացել՝ իր վստահորդի պահանջը բավարարվել է ամբողջությամբ, սակայն «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ի

խախտումների վերաբերյալ Տեսչական մարմինը որևէ գործողություն չի կատարել առ բացատրությունը ներկայացնելու օրը:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով Փաստաբանին ներկայացվել է 13.06.2025 թվականին կազմված պահանջ **(այսուհետև՝ Պահանջ)** Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը պահանջը ստացել է 17.06.2025 թվականին և սահմանված ժամկետում ներկայացրել է բացատրություն, որով նշել է, որ եթե Աշխատանքի տեսչական մարմինը իրավասու է եղել հարուցել վարչական վարույթ իր կողմից թվարկած հոդվածներով և իր որոշման մեջ չի նշել և չէր էլ կարող նշել, որ 130-րդ հոդվածը իրենց վերաբերելի չէ, ստացվում է, որ հենց ինքն է հանդիսանում «Բայ Էյ Էմ» ՓԲԸ-ի վերադասը, հակառակ դեպքում վերջինս իրեն իրավունք չէր վերապահի ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդվածների պարզաբանման համար վարչական վարույթ հարուցել:

Փաստաբանը նշել է, որ եթե Տեսչական մարմինը ընկալել էր, թե պահանջն իր դեմ է ներկայացրած, ապա ինչու առկա չէ որևէ գրավոր ապացույց, որ Փաստաբանը ծանուցվել է, որ Տեսչական մարմինը պահանջ կատարող մարմին չէ և վերոգրյալով պայմանավորված դիմումի պահանջը չի կարող կատարել:

Փաստաբանը հավելել է, որ Փաստաբանի հետ կապ է հաստատել կատարողը և հայտնել, որ նշված է «Դիմում-պահանջ», իսկ Տեսչական մարմինը պահանջ կատարող մարմին չէ: Փաստաբանը բացատրել է, որ հենց այդ պատճառով էլ չի գրվել միայն պահանջ, եթե անհրաժեշտ է և իրենց համար անհասկանալի է, կարող են պարզաբանում պահանջել, և ինքը հեռախոսազրույցի ընթացքում տված պարզաբանում կներկայացնի, որը հետևյալն է՝ «դիմում՝ աշխատանքի տեսչականին, պահանջ՝ «Բայ Էյ Էմ» ՓԲԸ-ին»: Կատարողը հայտնել է, որ անհրաժեշտ չէ պարզաբանում, ինքը կկազմի հեռախոսազրույցի արձանագրությունը և հենց նույն օրն էլ վարչական վարույթը կհարուցվի: Հեռախոսազանգը կատարվել է 06.03.2025թ. ժամը՝ 16:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում Փաստաբանի 099-89-89 94 բջջային հեռախոսահամարին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.04.2025թ. թիվ 144-Ա/ԿԳ-25067 որոշման հիման վրա փաստաբան Արմինե Դավթյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Կանոնագիրք)** 2.7.1-ին ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

06.05.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և</u>

<u>գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 30.06.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 30.06.2025թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 16.07.2025թ. ժամը 19:30-ին, 13.08.2025թ., ժամը 18:30-ին, 10.09.2025թ., ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը 28.02.2025թ. դիմում-պահանջ է ներկայացրել Տեսչական մարմնին, համաձայն որի՝ պահանջել է *«...ստանալ պարզաբանում, կատարել վերջնահաշվարկ, տրամադրելով 4 տարվա արձակուրդային գումարը և պարզաբանել, թե ինչ հիմունքներով է Կ. Առաքելյանը 4 տարի աշխատանք կատարել, որպես աշատավարձ գումար փոխանցվել և այլն: Անհրաժեշտ է հարուցել վարչական վարույթ , վարույթին մասնակից դարձնելով Կ. Առաքելյանին և փաստաբան Ա. Դավթյանին: Վերոթվարկյալ պահանջը կատարել ամենասեղմ ժամկետներում:»*: ***Սույն փաստը հաստատվում է*** *28.02.2025թ. Դիմում-պահանջով:*

2. Վերահաշվարկ կատարելու և 4 տարվա արձակուրդային գումարը տրամադրելու վերաբերյալ պահանջը ուղղված է եղել Տեսչական մարմնին: ***Սույն փաստը հաստատվում է*** *Դիմում-պահանջով և Փաստաբանի 18.06.2025թ. պահանջի պատասխանով:*

3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող ՀՀ կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ առողջապահության, անձի ֆունկցիոնալության գնահատման, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: ***Սույն փաստը հաստատվում է*** *ՀՀ վարչապետի 11.06.2018 թվականի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 755-Լ որոշմամբ:*

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արմինե Դավթյանը Արցախի Հանրապետության փաստաբան է հանդիսանում 27.06.2022թ., իսկ ՀՀ փաստաբանների պալատում հավատարմագրվել է՝ 12.07.2022- 12.07.2023թթ, 19.07.2023-19.07.2024թթ, 15.08.2024-15.08.2025թթ, 28.08.2025-28.08.2026թթ և տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ հավատարմագրված ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. **<u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արմինե Դավթյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1-ին ենթակետի պահանջների խախտման համար.

Օրենքի 17.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***այլ պետության փաստաբանը*** *Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական* ***գործունեությունն իրականացնում է նույն օրենքով****, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և* ***փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով****, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում գործում է իր պետության համապատասխան*** *փաստաբանական կառույցի* ***տված արտոնագրի հիման վրա*** *և պետք է փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված կարգով հավատարմագրվի փաստաբանների պալատում:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1-ին ենթակետի համաձայն՝ *Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի, այդ թվում Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածություն և օրենսդրության իմացությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Սույն կարգապահական գործում առկա տվյալներից հետևում է, որ փաստաբան Արմինե Դավթյանը՝ պաշտպանելով իր վստահորդ Կարեն Առաքելյանի իրավունքները 28.02.2025թ. ներկայացրել է դիմում-պահանջ վերտառությամբ փաստաթուղթ Տեսչական մարմնին: Դիմումով Փաստաբանը պահանջել է *«...ստանալ պարզաբանում, կատարել վերջնահաշվարկ, տրամադրելով 4 տարվա արձակուրդային գումարը և պարզաբանել, թե ինչ հիմունքներով է Կ. Առաքելյանը 4 տարի աշխատանք կատարել, որպես աշխատավարձ*

գումար փոխանցվել և այլն: Անհրաժեշտ է հարուցել վարչական վարույթ, վարույթին մասնակից դարձնելով Կ. Առաքելյանին և փաստաբան Ա. Դավթյանին: Վերոթվարկյալ պահանջը կատարել ամենասեղմ ժամկետներում:»:

Նշվածի հաշվառմամբ, Հանձնաժողովը նախ հարկ է համարում արձանագրել, որ Տեսչական մարմինը ունի հստակ կարգավիճակ և դրան համարժեք սպառիչ գործառույթներ:

Մասնավորապես, «Տեսչական մարմինների մասին» 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *տեսչական մարմինը հանդիսանում է օրենքի համաձայն ստեղծվող վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին,*

իսկ 1.2-րդ կետի համաձայն՝ *տեսչական մարմնի վերահսկողության ոլորտը հանդիսանում է օրենքով սահմանված ոլորտ կամ ոլորտի մաս, որի նկատմամբ տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվում է վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին:*

Ըստ այդմ, Տեսչական մարմինը հանդիսանալով, ի թիվս այլնի, աշխատանքային իրավունքի բնագավառում իրականացնում է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն և օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Նման պայմաններում Տեսչական մարմինը, ինչպես և ցանկացած պետական մարմին, սահմանափակված է Սահմանադրությամբ ու օրենքով իրեն վերապահված գործառույթներով և դրանց համարժեք օժտված է լիազորությունների սահմանափակ ծավալով:

Տվյալ դեպքում, Փաստաբանն ըստ էության ներկայացրել է այնպիսի պահանջ, որի բովանդակությունը առավելապես ուղղված է եղել հենց Փաստաբանի վստահորդի գործատու՝ «Բայ էյ էմ» ՓԲԸ-ին, իսկ դրա հետագա լուծումը վեճի առկայության պայմաններում, վերապահված է միայն դատարանին: Այլ կերպ ասած, Տեսչական մարմնին հասցեագրված *«...ստանալ պարզաբանում, կատարել վերջնահաշվարկ, տրամադրելով 4 տարվա արձակուրդային գումարը և պարզաբանել, թե ինչ հիմունքներով է Կ. Առաքելյանը 4 տարի աշխատանք կատարել, որպես աշատավարձ գումար փոխանցվել և այլն...»* պահանջից անհասկանալի է, թե ինչ գործիքակազմի հաշվառմամբ էր Փաստաբանը ակնկալում դրա կատարումը գործնականում, քանի որ ստացվում է, որ Տեսչական մարմինը այդ պահանջի հաշվառմամբ պետք է քննի և լուծի աշխատանքային վեճ, որի իրավասությունը ակնհայտորեն չուներ:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հիմնավոր չի դիտարկում Փաստաբանի կողմից ներկայացված պնդումներն առ այն, որ պահանջն ուղղված չի եղել Տեսչական մարմնին: Մասնավորապես, պետք է փաստել, ցանկացած պահանջ կազմում է դիմումի առարկան, այսինքն՝ դիմումի անբաժանելի մասը, և, եթե դիմումն ուղղված է Տեսչական մարմնին, ապա դիմումում նշված պահանջը նույնպես ուղղված է Տեսչական մարմնին:

Ավելին, Փաստաբանի պնդումները հակասության մեջ են մտնում իր իսկ կողմից ներկայացված դիրքորոշման այն դիտարկման հետ, որ **«Տեսչական մարմինը «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ի այն վերադասն է, ում կարող էր բողոք ներկայացվել»:**

Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի իրավապաշտպան գործունեության էության հաշվառմամբ, նկատի ունենալով յուրաքանչյուր գործով կիրառվող

մարտավարական առանձնահատկությունները, փաստաբանի կողմից ձեռնարկված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն իր վստահորդի իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովման նպատակով, այլապես կարող է ստացվել, որ, օրինակ, եթե ձևական առումով կատարվում է որևէ գործողություն՝ առանց դրա նպատակահարմարության, անհրաժեշտության կամ պիտանելիության հաշվառմամբ, ապա միայն գործողության կատարման փաստը դառնում է բարեխիղճ իրավական օգնության ցուցաբերման գնահատման առարկա, ինչը առնվազն անթույլատրելի է:

Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ պարագայում Փաստաբանը չի տիրապետել Տեսչական մարմնի կարգավիճակին և գործառույթներին, որոնք առնվազն ամրագրված են «Տեսչական մարմինների մասին» օրենքով և ՀՀ վարչապետի 11.06.2018 թվականի թիվ 755-Լ որոշմամբ: Ըստ այդմ, Փաստաբանը՝ չտիրապետելով համապատասխան օրենսդրությանը, ներկայացրել է այնպիսի պահանջով փաստաթուղթ, որը չէր կարող հասցեագրված լիներ Տեսչական մարմնին:

Փաստաբանը թե՛ 18.06.2025թ. ներկայացված բացատրությամբ, թե՛ կարգապահական նիստի ընթացքում փորձել է հիմնավորել Տեսչական մարմնի «ԲԱՅ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ի վերադասը հանդիսանալու հանգամանքը, ինչը ևս մեկ անգամ վերահաստատում և հիմնավորում է Փաստաբանի ոչ բավարար մասնագիտական պատրաստվածության մակարդակի մասին: Փաստաբանը չի տիրապետել այն տեղեկատվությանը, որ մասնավոր իրավունքի սուբյեկտ՝ իրավաբանական անձը չի կարող վերադաս ունենալ, իսկ Տեսչական մարմինը օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում կարող է իրականացնել վերահսկողություն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության տեսանկյունից:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.7.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:*

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Կանոնակարգի 8.4.2 ենթակետի համաձայն՝ *Այն դեպքում, երբ այլ պետության փաստաբանի կողմից առաջին անգամ թույլ տրված ոչ էական խախտումը հնարավոր է վերացնել և այն էական վնաս չի պատճառել վստահորդին, Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է* ***նկատողություն հայտարարել*** *այլ պետության փաստաբանին:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, այն հանգամանքը, որ Փաստաբանը Տեսչական մարմին ներկայացրած Դիմում-պահանջով, ըստ էության, որևէ կերպ չի վնասել իր վստահորդի իրավունքներին, ինչի մասին նաև վկայում է վերջինիս 18.06.2025թ. հայտարարությունը, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմինե Կառլենի Դավթյանի (Հավատարմագիր՝ 96, արտոնագիր՝ ԱՀ-103) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», «Փաստաբանության մասին» օրենքի Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1 ենթակետի պահանջների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25067-2-Ա
10 սեպտեմբերի 2025թ.
ք.Երևան